

## Գույքային հայտերի կարգավորման մասնագետ

### Աշխատանքի վայրը – ՀՀ, ք. Երևան

### Աշխատանքային պարտականությունները.

- ստուգում է գույքային հայտերի գծով ապահովագրական հատուցումների համապատասխանությունը Ընկերության ապահովագրության կանոններին, օրենքին և ապահովագրական հատուցումների գործընթացը կանոնակարգող այլ իրավական ակտերին,
- կազմակերպում և ապահովում է պատահարին առնչվող և Ապահովագրության համապատասխան կանոններով նախատեսված փաստաթղթերի ընդունումը,
- համապատասխան ընթացք է տալիս ապահովագրական հատուցումների հետ կապված դիմումներին,
- պատահարների ուսումնասիրության արդյունքում սահմանված ժամկետներում ապահովում է ապահովագրական հատուցում իրականացնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին որոշումների կազմումը և դրանք ներկայացնում հատուցումների գծով տնօրենի կամ գլխավոր տնօրենի հաստատմանը
- հետևում է Ընկերության կողմից ապահովագրական հատուցումների սահմանված ժամկետներում վճարման գործընթացին
- սահմանված ժամկետներում կամ Ընկերության հաշվապահության պահանջի դեպքում ապահովում է տվյալների ներկայացումը, որոնք անհրաժեշտ են տեղի ունեցած, սակայն Ապահովագրողին դեռևս չներկայացված ապահովագրական պահուստների հաշվարկի համար,
- կատարում է գլխավոր տնօրենի, հատուցումների գծով տնօրենի կամ բաժնի պետի կողմից տրված այլ հանձնարարականներ:

### Պահանջվող որակավորում, անձնական հատկանիշներ և գործարար որակներ.

- Բարձրագույն կրթություն
- Ապահովագրական ոլորտում աշխատանքային փորձի առկայությունը ցանկալի է
- Սուղ ժամանակային պայմաններում աշխատելու ունակություն
- Պատասխանատվության բարձր զգացում և պարտաճանաչություն
- Թիմում աշխատելու հմտություն

### Հմտություններ.

- Հայերեն լեզվի գերազանց իմացություն, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացությունը կղիտվի որպես առավելություն
- MS Office իմացություն

Հետաքրքրված անձինք կարող են մինչև 30.11.2022թ. իրենց ինքնակենսագրականը ներկայացնել [hr@armeniainsurance.am](mailto:hr@armeniainsurance.am) էլ. հասցեով՝ նշելով թափուր հաստիքի անվանումը: